



ՀԱՄՆԵԼ «ԱՅՈ» ՊԱՏԱՍԽԱՆԻՆ.

ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հնարավորություններ, ծրագրային դրույթներ, խթանիչ ազդակներ

Սվեն Բեհրենդ

Միջազգային տնտեսագիտության մասնագետ, Ժնև

Էլ. փոստ՝ sven.behrendt@geoeconomica.com

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի համար մշակված զեկույց

Հունիս, 2011թ.

Սույն զեկույցի բովանդակության համար պատասխանատու է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը: Ձեկույցը ստեղծվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ և Շվեդիայի Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ: Այստեղ արտահայտված տեսակետները կարող են չհամընկնել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության, ինչպես նաև Շվեդիայի Միջազգային զարգացման գործակալության կամ Շվեդիայի կառավարության տեսակետներին:

Ամփոփագիր

Սույն զեկույցը ձգտում է ներկայացնել գաղափարներ և տվյալներ, որոնք կարող են նոր հնարավորությունների զգացում, ծրագրային նախաձեռնություններ և խթանիչ ազդակներ ձևավորել Հայաստանի և Թուրքիայի, ինչպես նաև երկու երկրների հասարակությունների միջև հետագա երկխոսությունը խթանելու համար: Ձեկույցը հիմնված է այն ազատական ենթադրության վրա, որ քաղաքացիական հասարակությունների միջև երկխոսությունը կարող է նշանակալից ազդեցություն ունենալ միջազգային հարաբերությունների և երկու պետությունների միջև կապերի վրա: Ձեկույցը մեծապես հիմնված է հարցազրույցների վրա, որոնք անցկացվել են Հայաստանում և Թուրքիայում 2011 թվականի գարնանը, երբ երկու երկրների միջև սահմանը շարունակվում էր փակ մնալ: Ձեկույցը համակողմանիորեն ներկայացնում է քաղաքացիական հասարակության հիմնական շահառուների կողմից արված որոշ առաջարկություններ, որոնց համաձայն՝ անհրաժեշտ է շարունակել ու խթանել երկխոսությունը՝ անկախ առկա ռիսկերից:

Հեղինակի մասին

Սվեն Բեհրենթը համատեղ ռազմավարության և քաղաքական ռիսկի կառավարման մեջ մասնագիտացած անկախ միջազգային խորհրդատու է: Նա հյուրընկալվող հետազոտող (visiting scholar) է եղել Միջազգային խաղաղության Կարնեգի հիմնադրամի Միջին Արևելքի կենտրոնում (Բեյրութ, Լիբանան): Նախքան իր այս նշանակումը Բեհրենթն աշխատել է տարբեր ղեկավար պաշտոններում Համաշխարհային տնտեսական ֆորումում՝ նշանակալի ներդրում կատարելով Ֆորումը գիտելիքի վրա հիմնված բազմաշահառու համաշխարհային հարթակի վերածելու գործում: Նա նաև հետազոտական աշխատանքի մեծ փորձ ունի և աշխատել է Բերթելսման հիմնադրամի հետազոտական կենտրոնում՝ Բերթելսմանի Քաղաքական հետազոտությունների խմբում: Այդ փորձառության շրջանակներում Բեհրենթը նպաստել է ԱՄՆ-ի, Եվրոպայի և Միջին Արևելքի առաջնորդների ու քաղաքական որոշումներ կայացնողների միջև երկխոսությանը, ինչի արդյունքում արձանագրվել են մի շարք դիվանագիտական ձեռքբերումներ:

Բեհրենթն ունի Հանրային կառավարում և քաղաքականություն մասնագիտությամբ դիպլոմ և Միջազգային հարաբերությունների գիտությունների թեկնածուի աստիճան՝ տրված Գերմանիայի Կոնստանցի Համալսարանի կողմից: Նա հեղինակել է բազմաթիվ հրատարակություններ, այդ թվում նաև Օսլոյում Իսրայելա-պաղեստինյան գաղտնի բանակցությունների վերաբերյալ աշխատությունը: Նրա աշխատանքը գրախոսվել է the Financial Times, the Economist, the Wall Street Journal, the Times, the Middle East Economic Survey և the National հեղինակավոր պարբերականներում: Բեհրենթը նաև Լոնդոնի Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի անդամ է:

ԵՀՀ կողմից

2011թ. նոյեմբերին Երևանում հայ և թուրք գործընկերների ներկայացուցչական խմբի տարածաշրջանային հանդիպումը սկիզբ դրեց «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» (SATR) ծրագրին: Այն իրականացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, Երևանի մամուլի ակումբի, Մարդկային զարգացման միջազգային գործակալության և Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների միության կոնսորցիումի կողմից:

Հաշվի առնելով, որ Հայաստան-Թուրքիա պաշտոնական բանակցությունները սառեցվել են 2010թ. կեսերից, հանդիպմանը փաստվեց, որ խնդրո առնչությամբ արտաքին խորհրդատվության հրատապ կարիք կա: Խնդիր դրվեց հարցախույզների և վերլուծության միջոցով ուսումնասիրել երկխոսության գործընթացի կառավարական և հասարակական շահառուների կարծիքները: Ուսումնասիրությունը պետք է հստակեցներ այն խթանիչ ազդակները, որոնք կարող են հանգեցնել պաշտոնական գործընթացի վերսկսմանը, ինչպես նաև այն գաղափարները, որոնք կարող են իրականացվել անգամ պաշտանական գործընթացի սառեցվածության պայմաններում:

Խորհրդատվությունն իրակացվեց 2011թ. փետրվար-ապրիլ ամիսներին: Խորհրդատու պրն. Սվեն Բեհրենթը հետազոտական աշխատանքի և հարաբերությունների միջնորդության հսկայական փորձ ունի՝ կապված Միջազգային խաղաղության Կարնեգի հիմնադրամում, Բերթելսման խմբում և Համաշխարհային տնտեսական ֆորումում նրա աշխատանքի հետ: Նա տարբեր թեմաներով բազմաթիվ ուսումնասիրություններ է հեղինակել պրոֆեսիոնալ ամսագրերում, զեկույցներում և այլ հրատարակություններում: Զեկույցը, որը կազմվել է նրա հետազոտության արդյունքում, երկխոսության համար հնարավորությունների թարմ հեռանկար է ներկայացնում:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների թվացյալ հեշտության, միևնույն խնդիրների ու խոչընդոտների պարբերականության պատճառով երկխոսության գործնական դերակատարները հազվադեպ են այն դիտարկում հակամարտության փոխակերպման մոդելների տեսական և արժեքային շրջանակների մեջ: Առավել ընդունված է այդ հարաբերություններն ընկալել պրակտիկ քաղաքականության՝ ռեալպոլիտիկի (realpolitik) լույսի ներքո: Պրն. Բեհրենթի զեկույցը մարտահրավեր է նետում այդ սովորույթին՝ քաղաքացիական հասարակությանը հնարավորություն ընձեռելով իրավիճակին նայել այլ դիտանկյունից: Այստեղ արտահայտված գաղափարները պայմանավորեցին SATR ծրագրի շրջանակներում իրականացվող հաջորդական մարտավարական քայլերը: Հուսով եմ՝ դրանք

օգտակար կլինեն նաև այլոց համար, ովքեր ցանկանում են հասկանալ, թե ինչ կարելի է անել և ինչ պետք է արվի այս բարդ խնդիրը լուծելու համար:

Գևորգ Տեր-Գաբրիելյան

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի տնօրեն

Սվեն Բեռենթ

ՀԱՄԼԵԼ «ԱՅՈ» ՊԱՏԱՍԽԱՆԻՆ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ներածություն

Սույն զեկույցի խնդիրն է սահմանել թուրք-հայկական հարաբերությունների այն որոշակի ասպեկտները, որոնք կարող են խթանել երկու երկրների և նրանց հասարակությունների միջև երկխոսության, հարաբերությունների բարելավման և հաշտեցման գործընթացը: Զեկույցի նպատակն է կողմերին հաղորդել նոր հնարավորությունների զգացում, համատեղ ծրագրերի գաղափարներ և խթանիչ ազդակներ, որոնք կարող են հայեցակարգային հիմք հանդիսանալ կայուն և շարունակական երկխոսության համար:

2009թ. վերջին և 2010թ. մի քանի ամիս շարունակ հուլյսեր կային, որ երկու երկրների միջև հարաբերությունները կբարելավվեն: 2009թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարները նախաստորագրեցին երկու դիվանագիտական Արձանագրություններ: Առաջին Արձանագրությունը նախատեսում էր Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը, իսկ երկրորդ Արձանագրությունը կենտրոնանում էր երկու երկրների միջև հարաբերությունների ընդհանուր զարգացման վրա: Այդ երկրորդ Արձանագրությունը պարունակում էր փակ սահմանի բացման խոստում Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում: Այն նաև ներառում էր հարցերի լայն շրջանակին առնչվող մի շարք ռազմավարական նախաձեռնություններ, այդ թվում և երկխոսություն երկու ժողովուրդների միջև հարաբերությունների պատմական ասպեկտի շուրջ, համագործակցություն տրանսպորտի, հեռահաղորդակցության և էներգետիկ ենթակառուցվածքների ու ցանցերի ոլորտներում, երկկողմ գործակցություն օրենսդրական դաշտում, կրթության, գիտության և զբոսաշրջության ոլորտներում, ինչպես նաև առևտրային և տնտեսական համագործակցություն:

Այդ հարցերից ամենախորհրդանշականը, թերևս, սահմանի բացումն էր, որը խոստանում էր նոր շարժառիթ դառնալ հարաբերությունների կարգավորման և վերջնական հաշտեցման համար: Ինչևէ, Արձանագրությունների վավերացումը հետաձգվեց երկու երկրների խորհրդարաններում է՛լ հուսախաբ անելով երկու կողմերի բարյացակամ դերակատարներին: Թուրք-հայկական սահմանը մնաց փակված:

Ի՞նչ դեր կարող է կատարել երկխոսությունն այդ իրավիճակում: Այս առումով նպատակահարմար է հղում կատարել միջազգային հարաբերություններում քաղաքացիական զարգացման տեսության որոշ հիմնադրույթների: Ակադեմիական աշխարհում երկարատև բանավեճեր են տարվել այն մասին, թե որ դերակատարներն ու գործոններն են որոշիչ

հանդիսանում միջազգային հարաբերություններում, և ինչ փոփոխություններ կարող են նրանք իրականացնել: Ռեալիստական դպրոցի կողմնակիցները պնդում են, թե վերջին հաշվով պետությունները ներկայացնող կառավարություններն են, որ որոշիչ դեր են կատարում: Ի տարբերություն նրանց՝ ազատականներն ավելի քիչ ուշադրություն են դարձնում կառավարություններին և կենտրոնանում են հասարակական դերակատարների վրա՝ որպես գործակալների, որոնք ներազդում են իրենց կառավարությունների որոշումների և, հետևաբար, իրենց երկրների վրա: Ըստ այս մոտեցման՝ նրանք հանրությունների միջև կարևոր միջնորդներ են հանդիսանում նաև միջազգային ասպարեզում՝ կառավարությունների համար ուղի հարթելով դեպի հակամարտությունների առավել հաջող լուծումներ:

Թերևս բավականին փիլիսոփայական այս մոտեցումը որոշակի եզրահանգումներ է ենթադրում Թուրքիայի և Հայաստանի միջև երկխոսության ներուժը հասկանալու գործում: Համաձայն ռեալիստական մոտեցման՝ երկկողմ հարաբերությունները միայն այնքան ակտիվ կամ ոչ ակտիվ են, որքան որոշում են երկու երկրների կառավարությունները: Մինչդեռ համաձայն ազատական մոտեցման՝ երկու կողմերի քաղաքացիական հասարակություններն իրենք պետք է շատ ակտիվ դեր խաղան իրենց հասարակությունների, հետևաբար նաև երկրների միջև հակամարտությունը կարգավորելու գործում:

Սույն փաստաթուղթը մշակվել է ազատական տեսանկյունից՝ չանտեսելով նաև ռեալիստական նկատառումները: Փաստաթղթի հիմքում ընկած հետազոտությունն իրականացվել է «սառեցված» քաղաքական իրավիճակի պայմաններում: Այն հիմնված է Թուրքիայի և Հայաստանի քաղաքացիական հասարակությունների ներկայացուցիչների հետ 2011թ. գարնանը Ստամբուլում և Երևանում անցկացված հարցազրույցների վրա: Հարկ է նկատել, որ թեև լուրջ ջանքեր են գործադրվել մուտքային տվյալների բազմազանությունն ապահովելու ուղղությամբ՝ հարցազրույցներում տարբեր շահագրգիռ խմբեր ներգրավելով, այդուհանդերձ, ժամանակի սղությունը թույլ չի տվել էականորեն մեծացնել հարցվողների ընտրանքային շրջանակը:

Սույն փաստաթղթի հեղինակը Թուրքիայի և Հայաստանի, ինչպես նաև այդ երկրների հասարակությունների միջև հարաբերությունների փորձագետ չէ: Հաշվի առնելով այդ հարաբերությունների բարդ բնույթը՝ փաստաթուղթը չի ներկայացնում որևէ եզակի, գաղափարապես միատարր մոտեցում խնդրո առարկայի առնչությամբ, ինչպես նաև չի առաջարկում մեկ ընհանուր մեկնաբանություն, որը կարող է հիմք լինել տարբեր հնարավոր քաղաքականությունների համար: Այնուամենայնիվ, փաստաթուղթը որոշ մտքեր է ներկայացնում երկու երկրների կառավարությունների և հասարակությունների միջև երկխոսության գործընթացը խթանելու հնարավոր ուղիների վերաբերյալ: Սույն զեկույցի որոշ առաջարկություններ հիմնված են միջազգային հարաբերությունների և հակամարտությունների կարգավորման մասին առկա ծավալուն ու տարաբնույթ գրականության վրա: Հետևաբար, որոշ

առաջարկություններ կարող են մասնակիորեն համընկնել կամ անգամ հակասել միմյանց: Ինչևէ, ակնկալվում է, որ հստակ ճանապարհային քարտեզ ներկայացնելու փոխարեն զեկույցը կներկայացնի կառուցողական գաղափարների զգալի բազմազանություն:

Ճանաչել միմյանց իբրև հավասար գործընկերներ՝ անկախ աշխարհաքաղաքական անհամամասնություններից

Երկու երկրների միջև երկխոսության բովանդակային զարգացման ամենամեծ խոչընդոտներից մեկը, թերևս, նրանց աշխարհաքաղաքական դիրքերի լիակատար անհամամասնությունն է, որը հիմնականում պայմանավորված է երկու երկրների աշխարհագրական դիրքով և չափերով:

Թուրքիան ունի Եվրոպա դուրս գալու զգալի հնարավորություններ և հետամուտ է լինում վերջնական արդյունքում ԵՄ անդամակցելու հեռանկարին: Վերջին մի քանի տարիներին Թուրքիան նաև ակտիվորեն ներգրավվել է Միջին Արևելքի խնդիրներում՝ իբրև միջնորդ հանդես գալով տարբեր հակամարտող կողմերի միջև և իբրև կամուրջ ծառայելով Եվրոպայից դեպի Միջին Արևելք: Արաբական աշխարհում շատերը Թուրքիան դիտարկում են որպես ժողովրդավարական և տնտեսապես հաջողակ մահմեդական երկրի օրինակ: Թուրքիան շարունակում է դերակատար լինել նաև Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում:

Այլ կերպ ասած՝ Թուրքիան զբաղված է արտաքին քաղաքականության մի շարք կարևոր հարցերով, ինչը Հայաստանի հետ հարաբերությունների հարցը դարձնում է պակաս առաջնահերթ: Հարցվողներից շատերը նշում էին, որ «Թուրքիայում շատ դժվար է քարոզչություն իրականացնել Հայաստանի հարցով»: Նշվում էր նաև, որ «Թուրքիայում այդ թեման հետ է նահանջում այն բանից հետո, երբ Արձանագրություններն առաջ չընթացան»: Մյուս կողմից՝ Հայաստանն իր տարածքի չափի և ցամաքով շրջապատված դիրքի բերումով շատ ավելի քիչ աշխարհաքաղաքական ազդեցություն ունի:

Չնայած այս դիտարկումները կարող են աննշան թվալ, սակայն դրանք մատնանշում են այն հիմնական դժվարությունները, որոնք կան երկու երկրների և հասարակությունների միջև երկխոսության հաստատման գործում: Հարցվողները շարունակաբար պնդում էին, որ Թուրքիան «առանց այդ էլ բազմաթիվ խնդիրներ ունի», և որ Հայաստանի հետ հարաբերություններն ամենևին էլ առաջնահերթ չեն իրենց երկրի համար: Նշված անհամամասնությունները բացասաբար են ազդում բովանդակային երկխոսություն սկսելու Թուրքիայի մղումների վրա: Անշուշտ, դրա պատճառները պետք չէ կապել իրական թշնամական ընկալման ու վերաբերմունքի հետ: Դա ավելի շուտ պայմանավորված է երկու երկրների ուժերի հարաբերակցության կառուցվածքով և անհավասար բնույթով: Հարցվողներից մեկն այսպես

ձևակերպեց խնդիրը. «Թուրքիան Հայաստանի կարիքը չունի, իսկ Հայաստանն ունի Թուրքիայի կարիքը»:

Ռեալիստական տեսանկյունից՝ Հայաստանի ռազմավարությունն ինքնաբերաբար պետք է լինի այնպիսի միջազգային դաշինքների ձգտելը, որոնք կարող են նպաստել երկու երկրների միջև անհամամասնությունների մի մասի հավասարակշռմանն ու հաղթահարմանը: Ըստ այդմ՝ ավելի հավասար հիմքերով հարաբերությունները կնպաստեն, որպեսզի Թուրքիան ավելի ակտիվ ներգրավվի երկխոսության մեջ: Նման մոտեցման կենսունակության գնահատումը, սակայն, դուրս է այս զեկույցի շրջանակներից:

Երկրորդ՝ թերևս առավել խոստումնալից մոտեցման համաձայն, երկխոսությունը պետք է հիմնվի այնպիսի ելակետերի վրա, որոնք ոչ թե պայմանավորված կլինեն ուժերի առկա հարաբերակցությամբ, այլ հիմնված կլինեն սկզբունքների և համընդհանուր արժեքների վրա: Կարելի է նաև պնդել, թե Թուրքիան պատրաստվում է լավ հարաբերություններ պահպանել իր բոլոր հարևանների հետ՝ անկախ նրանց աշխարհաքաղաքական կշռից: Բացի դա, ինչպես հարցվողներից ոմանք ընդգծեցին, Թուրքիան և Հայաստանը բազմաթիվ միջազգային համաձայնագրերի հավասար անդամներ են և, ըստ այդմ, հարաբերվում են իբրև միջազգային համայնքի հավասար անդամներ: Բազմակողմ համաժողովներն ու կազմակերպությունները, ինչպիսին է, օրինակ, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), կարող են օգտագործվել առանձին խնդիրների շուրջ կողմերի շփումները խթանելու համար:

Հենց ուժերի հարաբերակցության անտեսումն է այն գլխավոր պատճառը, որի բերումով քաղաքացիական հասարակության համապատասխան անդամների կողմից զարգացվող երկխոսության ձևաչափերն առավել հաջողված և այս փուլում, թերևս, առավել խոստումնալից են, քան կառավարական մակարդակով երկխոսության ձևաչափերը: Կան հավասարության սկզբունքով Թուրքիայի և Հայաստանի քաղաքացիական հասարակությունների անդամների ներգրավող երկխոսության մի շարք ձևաչափեր: Մարդիկ դեմ առ դեմ հանդիպում են միմյանց որպես ուսանողներ, արվեստագետներ, լրագրողներ, գիտնականներ և գործարար աշխարհի ներկայացուցիչներ: Այս գործընթացներն ընթանում են զարմանալիորեն հարթ և արդյունավետ: Մյուս կողմին որպես իրավահավասար դերակատար ճանաչելն այն հիմքն է, որի վրա կառուցված են այդ երկխոսությունները:

Եթե Հայաստանի և Թուրքիայի կառավարությունները պետք է առավել ակտիվորեն և կառուցողական ձևով ներգրավվեն երկխոսության գործընթացում, ապա հարկ է ավելի մեծ ուշադրություն դարձնել այնպիսի իրավիճակների ստեղծմանը, որտեղ երկու կողմերը կարող են հանդիպել որպես հավասարներ: Այդպիսի իրավիճակներ կարող են ստեղծվել առանձին կոնկրետ խնդիրների շուրջ ոչ պաշտոնական հանդիպումների կամ ավելի լայն միջազգային ձևաչափերի համատեքստում քննարկումների իրականացման միջոցով:

Ստեղծել ընդհանուր ելակետեր և ձևավորել փոխըմբռնման զգացողություն

Կան ևս երկու կարևոր տարրեր, որոնք վերաբերում են հասարակությունների միջև երկխոսության ավելի խորը իմաստին: Դրանցից մեկը վերաբերում է երկխոսության ելակետերին, իսկ երկրորդը՝ մյուս կողմի զգացումները կիսելու և նրան հասկանալու կարևորությանը:

Անկասկած, ընդհանուր պատմությունը, համենայն դեպս առայժմ, Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների գլխավոր ելակետն է: Հարցվողներից ոմանք պնդում էին, որ երկու երկրների և նրանց հասարակությունների միջև հարաբերությունների առաջընթացն ապահովելու համար նախ անհրաժեշտ է համակողմանիորեն քննարկել Ցեղասպանության խնդիրը: Նշվում էր նաև, որ ժամանակի ընթացքում կարող է հնարավորություն ստեղծվել Ցեղասպանության խնդրին ավելի կառուցողական ձևով անդրադառնալու համար: Հարցվողներից շատերն ասում էին, որ Թուրքիայում մարդիկ տասնամյակներ շարունակ չգիտեին, թե ինչ է կատարվել 1915 թվականին, սակայն վերջին տարիներին հասարակությունը սկսել է ճանաչել իր սեփական պատմությունը: Ինչպես հարցվողներից մեկը բնորոշեց, «հասարակական զարթոնքի մի տեսակ» է տեղի ունենում: Հարցվողները գլխավորապես համակարծիք էին, որ վերջին մի քանի տարիներին պատմական իրազեկման հիմնարար գործընթաց է ընթանում: Մարդիկ սկսել են ավելի կառուցողական ձևով անդրադառնալ իրենց պատմությանը և տեղեկություններ ստանալ անցյալի իրադարձությունների մասին: Հարցման մասնակիցներից մեկն ասաց, որ «երկու միլիոն թուրքեր կան, որոնց հայկական արմատները բացահայտվել են միայն վերջին տարիներին»:

Վստահեցնում ենք, որ այս դիրքորոշումը հնչեցվել է ինչպես Թուրքիայի, այնպես էլ Հայաստանի հարցվողների շրջանում: Ոմանք նշեցին, որ Թուրքիան պետք է ընդունի՝ «մենք ունենք խնդիր, կամ ավելի շուտ՝ մենք ունենք խնդրահարույց պատմություն»: Անցյալի իրադարձությունները պետք է փաստվեն, և Թուրքիան պետք է հաշտվի իր պատմության հետ: «Վաղ թե ուշ թուրքական կառավարությունը ստիպված է լինելու բախվել Ցեղասպանության խնդրին», - ասաց հարցվողներից մեկը: Մյուսների կարծիքով՝ հասարակությունները պետք է քննարկեն իրենց պատմությունները շարքային անդամների մակարդակով:

Մրան զուգահեռ, բերվում էին նաև փաստարկներ, որ հայկական ազգային ինքնությունը հիմնականում, եթե ոչ բացառապես, կապվում է Ցեղասպանության պատմության հետ: Ի վերջո, Հայաստանը դեռևս բավականին երիտասարդ պետություն էր, և հղումը պատմական տառապալից անցյալին ինքնաբերաբար դարձել էր ազգային նկարագիրն ու ինքնությունը զարգացնելու ռազմավարություն:

Հարցվողների կարծիքները կիսվեցին պատմությանն արվող հղումներն իբրև ապագա երկխոսության հիմք օգտագործելու խնդրի շուրջ: Հարցվողներից մեկը մտավախություն

հայտնեց, թե «վտանգ կա, որ Ցեղասպանության հարցին առավել փութաջանորեն անդրադառնալը կարող է նաև խորացնել հակամարտությունը»: Մյուսներն արձագանքեցին այս մտահոգությանը. «Մենք բոլորս վախենում ենք փոխզիջումից: Մեր ակնկալիքներն անհամամասնական են»: «Քար մի՛ նետեք երկխոսության վրա՝ Ցեղասպանության հարցը բարձրացնելով», - նկատեց մեկ այլ հարցվող՝ մատնանշելով դրա հետ կապված սպառնալիքները: Մյուսները հավելեցին, որ ներկայումս «Ցեղասպանության մասին քննարկումներ ծավալելը Թուրքիայի օրակարգում չէ»:

Ելնելով սրանից՝ խորհուրդ է տրվում մշակել այլընտրանքային ելակետեր կամ ավելի լավ տեղեկանալ դրանց, եթե այդպիսիք արդեն կան: Այդ ելակետերը կարող են ներառել 1915 թվականին նախորդող պատմությանն արվող հղումներ՝ ընդգծելով համատեղ պատմության դրական տարրերը: Հարցազրույցի որոշ մասնակիցներ նշեցին, որ Հայաստանը քիչ ժամանակ է տրամադրում Թուրքիայի և Հայաստանի հասարակությունների ընդհանուր, համատեղ պատմությունը վերագտնելուն:

Ընդհանուր ելակետերը, սակայն, կարող են ուղղվել նաև ապագային: Նմանատիպ այլ գործընթացներում օգտակար են եղել այնպիսի ելակետեր, որոնք, օրինակ, սահմանել են հակամարտող կողմերի համատեղ տնտեսական ապագան: Բոլոր այդ դեպքերում ապագայի, այլ ոչ թե անցյալի արտացոլումն է իմաստավորում դերակատարների վարքագիծը և, հուսանք, այդ կերպ ավելի փոխշահավետ արդյունքներ է տալիս:

Այստեղ է, որ որոշակի դեր է կատարում փոխըմբռնման տարրը: Որպեսզի իրական երկխոսություն ընթանա, կողմերը պետք է հարցերին մյուս կողմի տեսանկյունից նայելու պատրաստակամություն դրսևորեն: Թուրքիայում հետզհետե ավելու ու ավելի մեծ թվով մարդիկ են ընդունում հայերի ցավը: Հարցվողներից շատերի համոզմամբ՝ սա կարևոր քայլ է դեպի ճանաչելու, ներողություն խնդրելու և ներելու գործընթացը, և կարևոր քայլ է դեպի ենթադրյալ մերձեցումը: Այդ գործընթացին նպաստելու համար անհրաժեշտ է, որ չափավոր մոտեցում ձևավորվի Հայաստանում, և քաղաքական առաջընթաց դրսևորվի Թուրքիայում:

Խորացնել և ընդլայնել երկխոսությունը

Անցած մի քանի տարիներին քաղաքացիական հասարակությունների անդամները և այլոք էական առաջընթաց են արձանագրել՝ խորացնելով համայնքների միջև երկխոսությունը, քննարկելով բազմաթիվ քաղաքական հարցեր և դրանով իսկ հայեցակարգային հիմքեր դնելով հետագա աշխատանքի համար: Երկխոսության տարբեր ձևաչափերում ներգրավված անձինք ամրապնդել են այդ մեծ առաջընթացը, ինչն ակնհայտ է դարձել ավելի շատ անձնական հարաբերությունների հաստատմամբ: Այժմ, հարցվողներից մեկի բառերով, «գուցե քաղաքական

հարթության վրա լռություն է տիրում, սակայն դա ամեննին այդպես չէ քաղաքացիական հասարակության պարագայում»:

Այդ հիմնավորումներով պայմանավորված՝ ներկայումս աճող հետաքրքրություն կա գործընթացն առավել ընդգրկուն դարձնելու հարցում: Հարցվողների մեծ մասը, եթե ոչ բոլորը, նկատեցին, որ երկխոսության գործընթացում ընդգրկված անձանց թիվն առայժմ բավականին սահմանափակ է: Հարցվողներից մեկը նշեց, որ առայժմ «այդ հարցերի շուրջ ինտենսիվ քննարկումներում յուրաքանչյուր կողմից հիսունական մարդ է ներգրավված», որն իսկապես բավականին սահմանափակ թիվ է: Մյուսները ևս հաստատեցին այդ դիտարկումը՝ նշելով, որ «նույն դեմքերն են» հանդիպում նույն իրադարձությունների ժամանակ: Հարցվողներից մեկը նկատեց նաև. «Մենք դեռևս սահմանային շարժում ենք: Թուրքիայում 20 միլիոնից ավելի երիտասարդներ են բնակվում, որոնք շատ բան չգիտեն իրենց ինքնության մասին»: Մեկ այլ հարցվող նշեց. «Չկան անկախ մտավորական առաջնորդներ: Մենք կորցրեցինք Հրանտ Դինքին, և առայժմ չկա մի թեկնածու, որն անմիջականորեն կլրացնի այդ բացը»: Հայաստանում նույնպես չկան երկխոսությանը սատարող անվանի առաջնորդներ և հայտնի «ձայներ»:

Սա նշանակում է, որ երկխոսությունը պետք է խորացվի և ընդլայնվի: Այս համատեքստում խորացումը վերաբերում է ավելի կոնկրետ նախաձեռնություններին և ծրագրերին, որոնք նշանակալից ազդեցություն են թողնում մարդկանց առօրյա կյանքի վրա և (կամ) հանգեցնում են բովանդակային փոփոխությունների քաղաքականության մեջ: Ընդլայնումը վերաբերում է արդեն իրականացվող ծրագրերի ընդգրկմանը և ենթադրում է գործընթացում ներգրավված անձանց թվի շարունակական աճ:

Ներգրավումը պետք է խթանվի բոլոր մակարդակներում: Որոշ հարցվողներ համոզմունք հայտնեցին, որ երկխոսության սկզբունքը պետք է ավելի ակտիվ ձևով խթանվի նաև հասարակության շարքային անդամների մակարդակում: Ավելի երիտասարդ սերունդը կարող է ավելի բաց և այդ մտտեցումներով ավելի հետաքրքրված լինել: Բացի դա, հարցվողների գերակշռող մասը նշեց, որ առ այսօր երկխոսությունը խիստ կենտրոնացված է Երևանի ու Ստամբուլի վրա, և առաջարկեց այն տեղափոխել Թուրքիայի արևելյան շրջանները: Հարցվողներից մեկը նկատեց, որ Վան-Դիարբեքիր-Կարս եռանկյունում համայքների միջև շփումներ և երկխոսություն գրեթե չկան: Եղան նաև առաջարկություններ երկխոսությունն ակադեմիական շրջանակներից դուրս բերելու և ընդլայնելու վերաբերյալ: Այլ հարցվողների կարծիքով՝ երկխոսությանը մինչ այժմ հետամուտ են եղել առաջադեմ մտավորական ուժեր, բայց ներկայումս անհրաժեշտ է այն դուրս բերել տեսական բանավեճերի շրջանակներից:

Տարածաշրջանային հարթությունը

Անհրաժեշտ է նպաստավոր պայմաններ ստեղծել, որպեսզի ավելի սերտ թուրք-հայկական կապեր հաստատվեն տարածաշրջանային քաղաքական հարթության վրա: Տարածաշրջանային զարգացումների առավել հիմնավոր քննարկումը և առավել լայն միջազգային միջավայրում փոխազդեցության հնարավորությունը կարող են կողմերի համար շատ լուրջ հարթակ ստեղծել նոր հնարավորություններ բացահայտելու և ընդհանուր հիմքեր գտնելու համար: Թուրք-հայկական հարաբերությունների տարածաշրջանային հարթության ավելի լավ ըմբռնումը հնարավորություն կտա տեսնել այն առավելությունները, որոնք այլ կերպ չէին նկատվի:

Ճանապարհներից մեկը, որով կարելի է առաջ ընթանալ, Թուրքիայի ներգրավմամբ Հարավային Կովկասի համատեղ ապագայի այլընտրանքային սցենարների հետագա ուսումնասիրությունն է: 21-րդ դարասկզբի Հարավային Կովկասն իրենից ներկայացնում է խիստ մասնատված մի տարածաշրջան՝ լի ներպետական և միջպետական հակամարտություններով, որոնք կանխում են կառուցողական շփումները և համագործակցությունը: Սա թույլ է տվել, որ արտաքին դերակատարներն իրենց օգտակար կամ ոչ օգտակար հետքը թողնեն տարածաշրջանում: Սցենարի մշակման շրջանակներում կարող են ուսումնասիրվել տարաբնույթ աշխարհաքաղաքական և միջազգային տնտեսական զարգացումներ, որոնց կարող է մասնակցել Հարավային Կովկասը, ինչի արդյունքում կարող են բացահայտվել ապագա համագործակցության դեռևս չհետազոտված հնարավորություններ: Սցենարների մշակման այդպիսի գործընթացները հետագայում կարող են շահել նաև տարածաշրջանից դուրս գործող դերակատարների՝ Ռուսաստանի, Եվրամիության, Միացյալ Նահանգների, ինչպես նաև Միջին Արևելքի դերակատարների ներգրավումից:

Թուրք-հայկական հարաբերությունների աշխարհաքաղաքական հարթությանը նվիրված հարցազրույցներում կարևորվեցին նաև Ադրբեջանի հետ Հայաստանի հարաբերությունները և Լեռնային Ղարաբաղի ապագայի հարցը: Հայաստանում հարցվողները վերահաստատեցին այն դիրքորոշումը, որ տեսանելի ապագայում այդ հարցում ցանկացած շարժ անընդունելի կլինի: Թուրքիայում հարցվողները կրկին ընդգծեցին թուրք-ադրբեջանական հարաբերությունների կարևորությունը: «Չի կարելի առանձնացնել Բաքուն և Անկարան: Նրանք փոխկապված են: ...Հիմնական խնդիրը Ղարաբաղն է», - ասաց հարցվողներից մեկը Թուրքիայում: Մեկ այլ հարցվողի կարծիքով՝ հնարավոր է, որ թուրքական կառավարությունը թերագնահատել է ադրբեջանցիների հակազդեցությունն Արձանագրություններին և արդյունքում ստիպված է եղել վերադառնալ նախկին դիրքորոշմանը: Հաշվի առնելով ինչպես թուրք-հայկական, այնպես էլ հայ-ադրբեջանական հարաբերությունների դիվանագիտական փակուղին՝ կարելի է ուսումնասիրել, թե արդյոք կան քաղաքական այլընտրանքներ, որոնք կարող են նպաստել հակամարտության լուծմանը:

Հարցվողներից մեկն առաջարկեց ուսումնասիրել մի երևույթ, որը միջազգային հարաբերություններում հայտնի է որպես «անվտանգության երկրնտրանք»: Անվտանգության երկրնտրանքը մի իրավիճակ է, երբ մի երկրի ռազմական պաշտպանության որևէ միջոցառում հակառակորդի կողմից ընկալվում է որպես հարձակողական քայլ: Թեև սույն զեկույցում որևէ կերպ չի ենթադրվում, որ Հայաստանը և Թուրքիան ռազմական հակառակորդներ են, այնուամենայնիվ, այս երկրներին կարելի է վերագրել անվտանգության երկրնտրանքի ավելի թեթև տարբերակներ և, ըստ այդմ, երկու կողմերի զինվորական անձնակազմի ներկայացուցիչներին ներգրավել ռազմավարական բնույթի երկխոսության, տեղեկատվության փոխանակման և փոխընկալման ձևավորման գործընթացներում:

Եվ վերջապես, կարելի է նաև հետազոտել ավելի ու ավելի դինամիկ դարձող Միջին Արևելքի ազդեցությունը թուրք-հայկական հարաբերությունների վրա: Արաբական աշխարհը մի կարևոր փուլ է ապրում, որը կարող է հանգեցնել տարածաշրջանային ստատուս-քվոյի փոփոխությանը դեպի ավելի լավ կամ վատ: Միաժամանակ Պարսից ծոցի տարածաշրջանը հսկայական օգուտներ է քաղել նավթի մեծ պահանջարկից և դրանից ստացվող եկամուտներից: Իրանը և նրա միջուկային ծրագիրը շարունակում են անհանգստացնել միջազգային հանրությանը: Այս բոլոր գործոնները կարող են ազդել թուրք-հայկական հարաբերությունների վրա, քանի որ երկու երկրներն էլ ամուր կապեր ունեն տարածաշրջանում: Արժե ուսումնասիրել, թե այդ իրադարձություններն ինչպես կարող են զարգանալ ապագայում:

Տարածաշրջանային և միջազգային համատեքստում ապագա թուրք-հայկական հարաբերությունների վերլուծությունն ու քննարկումն ավելի խոստումնալից հեռանկար է բացում Հայաստանի, Թուրքիայի և թուրք-հայկական հարաբերությունների հետ կապ ունեցող այլ երկրների գիտական և հետազոտական շրջանակների՝ այսպես կոչված «ուղեղային կենտրոնների» ներգրավման համար: Նման գործընթացները սովորաբար հակամարտող կողմերին ստիպում են ավելի ստեղծագործական մոտեցում ցուցաբերել, վեր կանգնել կարծրատիպերից, մշակել ու քննարկել այլընտրանքային ու նորարարական քաղաքականության տարբերակներ:

Մովորել, թե ինչպես կարելի է ոչ պաշտոնական դիվանագիտություն վարել

Թուրք-հայկական հարաբերությունների տարածաշրջանային հարթության դիտարկումը կարող է շարժառիթ հանդիսանալ նաև ոչ պաշտոնական, զուգահեռ դիվանագիտության զարգացման համար: Զուգահեռ երկխոսության գործընթացները, որոնք հիմնականում իրականացվում են գիտական շրջանակների և «ուղեղային կենտրոնների» կողմից, միջազգային խնդիրների լուծման ու միջազգային դիվանագիտությանն աջակցելու կարևոր գործիքներ են:

Մովորաբար ոչ պաշտոնական դիվանագիտական խողովակները ստեղծվում են, երբ կառավարությունների միջև հարաբերություններում գերակա անվտանգությունն ու թյուրըմբռնումն արգելափակում են պաշտոնական բանակցությունների առաջընթացը: Եվ հաճախ այդ զուգահեռ ջանքերը մեծ ներդրում են ունենում պաշտոնական բանակցությունների վերսկսման և հակամարտությունների կարգավորման սառեցված գործընթացներն առաջ մղելու գործում:

Այդ ջանքերը հատկապես իմաստալից են դառնում, երբ կառավարություններն այս կամ այն պառճառով չեն ցանկանում ներգրավվել պաշտոնական բանակցություններում, սակայն որոշ քաղաքական հարցեր, թեկուզ սահմանափակ կերպով, համաձայնեցնելու կարիք են զգում: Նման գործընթացները զգալի ներդրում են կատարում հակամարտության լուծման գործում, քանի որ թույլ են տալիս ներգրավված կողմերին օգտագործել այնպիսի հնարավորություններ, որոնք կառավարությունները չեն կարող կիրառել՝ ելնելով տարբեր քաղաքական պատճառներից, և դրանով իսկ այդ գործընթացները թույլ են տալիս կողմերին ուսումնասիրել կարգավորման այլընտրանքային տարբերակների ամբողջ փաթեթը:

Հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում «ուղեղային կենտրոնների» ներդրումը ոչ պաշտոնական դիվանագիտությունը զարգացնելու գործում բարձր է գնահատվում: Այնուամենայնիվ, մի շարք հարցեր դեռ պետք է քննարկել, որպեսզի ոչ պաշտոնական դիվանագիտության ջանքերն էլ ավելի արդյունավետ դառնան:

Առաջին խնդիրն այն է, որ ոչ պաշտոնական դիվանագիտությանը պետք է զարգանալու հնարավորություն տրվի: Մասնավորապես հայաստանյան կողմում կարծիք կա, որ ոչ պաշտոնական երկխոսությունն իրեն սպառել է Արձանագրությունների նախաստորագրումից և դրանց վավերացման գործընթացի սառեցումից հետո: Հիասթափության զգացողություն և համոզմունք կա, որ առաջին քայլը պետք է կատարվի պաշտոնական միջկառավարական մակարդակում, և որ երկխոսության մյուս ձևաչափերը կարող են զարգանալ միայն Արձանագրությունների վավերացումից հետո: Այս ընկալման հետ է կապված նաև այն գնահատականը, թե երկխոսության գործընթացներում ներգրավված «ուղեղային կենտրոնները» չունեն քաղաքական որոշում կայացնող մարմինների հետ այն անհրաժեշտ կապերը, որոնցով կկարողանան ներազդել կառավարությունների վրա: Հարցվողներից մեկի կարծիքով՝ առանց պետական աջակցության զուգահեռ դիվանագիտության ջանքերը չեն կարող որևէ արդյունք տալ:

Մտահոգություններ արտահայտվեցին նաև «ուղեղային կենտրոնների»՝ տարբեր ազդեցություններից խուսանավելու հնարավորություն ունենալու կապակցությամբ: Կառավարությունները, կարծես, լիակատար վերահսկողություն ունեն «ուղեղային կենտրոնների» նկատմամբ: Հայաստանում պետական իշխանությունը դեռևս հիշեցնում է երկրի

խորհրդային դարաշրջանի և ավտորիտար պատմության մասին: Թուրքիայում «պետականության» ուժեղ գաղափարախոսությունը նույն հետևանքներն է թողել «ուղեղային կենտրոնների»՝ ավելի ազատ շրջադարձեր կատարելու ունակության վրա:

Այս վերապահումներով հանդերձ, հաշվի առնելով երկու երկրների կառավարությունների միջև ստեղծված քաղաքական մթնոլորտը, անհրաժեշտ է շարունակել ոչ պաշտոնական երկխոսությունը: Անգամ եթե այդ գործընթացը չհանգեցնի անմիջական արդյունքների, երկու երկրների գիտական և մտավորական առաջնորդների միջև երկխոսությունը կնպաստի այնպիսի մի դինամիկայի ստեղծմանը, որն ի վերջո կարող է դրական կողմնակի ազդեցություն ունենալ երկու երկրների կառավարությունների վրա: Այսօր «ուղեղային կենտրոնների» երկխոսությունը կարող է կենտրոնանալ ավելի լայն ռազմավարական հարցերի վրա, որոնք կնպաստեն համատեղ ռազմավարական արժեքի ստեղծմանը, որն էլ իր հերթին հետագայում կօգնի կառավարություններին հարաբերությունների բարելավման և համագործակցության գործում: Նշված գործառույթն իրականացնելու համար «ուղեղային կենտրոնները» պետք է իրենց համար գործունեության ասպարեզ ստեղծեն, որպեսզի քննարկեն հարցերն առանց տաբուների և առանց պետական դիրքորոշման ճնշման ներքո ինքնագրաքննության կարիքի:

Ընդունել մյուս կողմի բազմազանությունը

Հարևան երկրները, որոնք որոշ ժամանակ միմյանց հետ համեմատաբար խորը քաղաքական հարաբերություններ և սոցիալական փոխգործակցություն չեն պահպանել, հակված են միմյանց ընկալել իբրև միատարր միավորներ՝ նման այն մեկուսի պետություններին, որոնց ներքին գործընթացներն ու տեղական հակամարտություններն այնքան ակնհայտ չեն արտաքին դիտորդի համար: Նման դեպքերում թվում է, թե պետությունների և նրանց հասարակությունների շահերը մեծապես համընկնում են, ինչը հետագայում հանգեցնում է անարդյունավետ կարծրատիպերի ստեղծման:

Նույն տրամաբանությամբ՝ զգալիորեն չափազանցվում են Հայաստանում և Թուրքիայում հասարակությունների միատարրության մասին պատկերացումները: Երկու հասարակությունների բավականին հատվածավորված բնույթը թերագնահատվում է, թեև երկու երկրներում էլ կան հստակ տարբերություններ՝ քաղաքային և գյուղական համայնքներ, տնտեսական զարգացման անհամաչափություն, կրթական մակարդակի տարբերություններ, ազգային և կրոնական բազմազանություն և այլն:

Թեև Հայաստանում ժողովրդականություն է վայելում «թուրք հասարակության»՝ համերաշխ ու միատարր լինելու մասին կարծիքը, այդուամենայնիվ, Հայաստանում որոշ վերլուծաբաններ ընդունում են, որ Թուրքիան դեռ գտնվում է ազգային ինքնության զարգացման գործընթացում: Ուժեղ ազգային ինքնության վրա հիմնված ազգային պետության կուռ կառույցը

դեռևս չի կարողացել դուրս մղել Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների՝ քրդերի, չերքեզների, բոսնիացիների, ալբանացիների, վրացիների, արաբների և այլոց ազգային ինքնագիտակցությունը: Թուրքիայի բազմազգ հասարակությունը ստիպված է եղել բազմաթիվ վերաբնակիչներ ներառել իր մեջ, սակայն որպես այդպիսին՝ այն դեռ պետք է ավելի ընդգրկուն և անխտրական դառնա:

Տարածված են նաև հակասական պատկերացումները հայկական Մփյուռքի բնույթի վերաբերյալ: Հայ հարցվողներն ընդգծում էին իրենց հայացքներն այն մասին, թե թուրքական կառավարությունը Հայաստանի կառավարության հետ միասին կընդունի հայկական Մփյուռքին նույնպես: Միայն էին, սակայն, նաև Թուրքիայի պատկերացումներն այն մասին, թե Հայաստանի կառավարության համար Մփյուռքը Թուրքիայի կառավարությունից զիջումներ կորզելու մի գործիք է: Նման ընկալումը կարող է ձևավորված լինել աշխատանքի համար այլ երկրներ մեկնած իր սեփական արտագաղթողների նկատմամբ Թուրքիայի ցուցաբերած մոտեցման ազդեցությամբ: Թուրքիայի կառավարությունը շարունակում է ձևավորել և պահպանել այլ երկրներում աշխատող թուրք վերաբնակիչների հավատարմությունը հայրենի երկրի հանդեպ:

Փոխարենը՝ հայաստանյան հարցվողները մատնանշում էին Մփյուռքի համայնքների զգալի ներքին հատվածավորվածությունը: Նրանց համոզմամբ՝ պարտադիր չէ, որ Մփյուռքի շահերն ու քաղաքական շարժառիթներն անպայմանորեն համընկնեն Հայաստանի կառավարության կամ հասարակության շահերի ու շարժառիթների հետ: Ավելին, Հայաստանում հարցվողներից շատերը նշում էին, որ երբեմն Մփյուռքը Յեղասպանության ճանաչման նպատակով չափազանց մեծ ճնշում է գործադրում միջազգային հանրության տարբեր անդամների վրա, ինչը կարող է հակառակ ազդեցություն գործել, եթե հարաբերությունների կարգավորման և հաշտեցման գործընթացում առաջընթաց գրանցվի:

Թուրք-հայկական հարաբերություններում Մփյուռքի դերի մասին տարաբնույթ մեկնաբանությունները ենթադրում են, որ երկխոսությունը պետք է ընթանա ոչ միայն թուրքական և Հայաստանում բնակվող հայկական շահագրգիռ կողմերի միջև, այլև առավել համակարգված ձևով ներառի Մփյուռքի ներկայացուցիչներին: Ինչպես առաջարկեց հարցվողներից մեկը, «պետք է նաև Հայրենիք-Մփյուռք երկխոսություն լինի»:

Համագործակցության տնտեսական հարթության զարգացում

Փակված սահմանները և հակամարտության շարունակությունը հանգեցնում են հավելյալ տնտեսական ծախսերի: Թուրք-հայկական համատեքստում այդ ծախսերը բացասական ազդեցություն են գործում Թուրքիայի արևելյան մասի տնտեսական զարգացման ներուժի և Հայաստանի վրա: Ներկայումս արևելյան Թուրքիայի շրջանները հիմնականում տնտեսապես թերզարգացած են: Հայաստանում եկամուտները լճանում են, և աճում է ներդրումների

ներգրավման համար մրցակցությունը Վրաստանի հետ. Վրաստանն աչքի է ընկնում կոռուպցիայի ավելի ցածր մակարդակով և ավելի գրավիչ հարկային ռեժիմով, և ավելի մեծ թվով ընկերություններ են Հայաստանից տեղափոխվում Վրաստան:

Հարցվողներն ավելի կայուն քաղաքական հարաբերությունների զարգացումը դիտարկում էին իբրև կարևոր քայլ դեպի տնտեսական զարգացում: Թուրքիայի և Հայաստանի գործարար համայնքներն արդեն իսկ բավականին ճկուն են գտնվել՝ ստեղծելով ամուր գործարար կապեր, որոնք ի վիճակի են եղել շրջանցել քաղաքական խոչընդոտները: Ներկայումս առևտուրն իրականացվում է Վրաստանի տարածքով, ու թեև վարչարարական քաշքշուկները և բեռնափոխադրումների ավելի երկար հեռավորությունները զգալիորեն փոքրացնում են թուրք-հայկական առևտրի լրիվ ներուժը, ներկայումս Թուրքիայում և Հայաստանում բազմաթիվ տնային տնտեսություններ կախված են այդ առևտրից ստացվող եկամուտներից: Երկու կողմերի հարցվողներն էլ մատնանշում էին մի շարք տնտեսական ոլորտներ, որոնք կարող են հատկապես խոստումնալից լինել, եթե ավելի նպաստավոր քաղաքական միջավայր ստեղծվի:

Դրանցից մեկն էներգետիկայի և էներգետիկ անվտանգության ոլորտն է: Վերջինս սպառողների՝ էներգիայի դիվերսիֆիկացված աղբյուրներ զարգացնելու կարողությունն ու գործառույթն է դարձել:

Թուրքիայի աճող տնտեսությունը և, հետևաբար, էներգիայի աճող պահանջարկը, ինչպես նաև դեպի Եվրոպա էներգիա արտահանելն ու տարանցիկ պետություն լինելը երկրի համար գերակա խնդիր են դարձնում մատակարարման այլընտրանքային աղբյուրների զարգացումը: Հարցվողներից մեկի կարծիքով՝ Թուրքիան պետք է շահագրգիռ լինի Հայաստանի հետ հարաբերությունների բարելավմամբ, որպեսզի դիվերսիֆիկացնի էներգիայի մատակարարման իր աղբյուրները և տարանցիկ ուղիները: Օրինակ՝ Թուրքիան քարածխի ամենախոշոր ներկրողն է աշխարհում: Իր պահանջարկը բավարարելու համար Անկարան ստիպված կլինի ավելի ամուր առևտրային հարաբերություններ զարգացնել Ռուսաստանի հետ, որը քարածխի ամենախոշոր արդյունահանողն ու արտահանողն է աշխարհում: Հայաստանի հետ սահմանի բացումը կնպաստի քարածխի առևտրին, և Թուրքիան կշահի դրանից:

Ճապոնիայի Ֆուկուշիմա ատոմակայանում տեղի ունեցած դեպքերից հետո էներգետիկ անվտանգությունը խնդիր դարձավ նաև Հայաստանի համար, քանի որ աշխարհը սկսեց վերանայել միջուկային անվտանգության և էներգետիկ անվտանգության առաջնահերթության հարցը: Սույն զեկույցը կազմելու պահին Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (IAEA) փորձագետների թիմը «սթրես թեսթեր»՝ ծանրաբեռնված իրավիճակում աշխատանքի փորձարկումներ, էր իրականացնում Հայաստանի Մեծամորի ատոմակայանում, որն ապահովում է Հայաստանում սպառվող էլեկտրաէներգիայի մոտ 40 տոկոսը: Կարելի է ուսումնասիրել, թե ավելի սերտ քաղաքական հարաբերություններն ինչ օգուտներ կարող են

տալ ոչ միայն էներգետիկ անվտանգության մակարդակի աճի, այլև տարածաշրջանում միջուկային անվտանգության ավելի բարձր աստիճանի ապահովման առումով:

Ավելին, զգալի ներուժ կա նաև զբոսաշրջության զարգացման համար: Հայաստանցիները կկարողանան ազատ տեղաշարժվել սահմանով, իսկ Թուրքիայի քաղաքացիները՝ մասնավորապես երկրի արևելյան շրջանների բնակիչները, կկարողանան օգտվել Երևան ճամփորդելու հնարավորությունից: Միջազգային զբոսաշրջության շուկան շատ վատ է զարգացած, և տնտեսության այդ սեգմենտը կշահի բաց սահմաններից և պատմական ու տեսարժան վայրերի հասանելիությունից:

Թուրք ներդրողները կշահեն նաև աշխատուժի շուկայի գների տարբերություններից: Հայաստանում նվազագույն աշխատավարձը կազմում է մոտավորապես 100 ԱՄՆ դոլար, իսկ Թուրքիայում՝ 400 ԱՄՆ դոլար: Թուրքիայում պարտադիր սոցիալական ապահովության վճարները և ապահովագրության գները շատ ավելի բարձր են, քան Հայաստանում: Հարցվողներից մեկի կարծիքով՝ Հայաստանում տեքստիլ արդյունաբերությունում 50 մլն. ԱՄՆ դոլարի ներդրումը կհանգեցնի 10,000 աշխատատեղերի ստեղծմանը: Մեկ այլ գրավիչ կողմ է Հայաստանի ազատ ելքը դեպի ռուսաստանյան շուկաներ: Թուրքիայից Ռուսաստան արտահանվող ապրանքներից գանձվում է 30 տոկոս ներկրման հարկ, մինչդեռ Հայաստանի տարածքով ապրանքների և ծառայությունների արտահանումը կնվազեցնի թուրքական ապրանքների ներկրման ծախսերը:

Թուրքիայի գործարար համայնքի հիմնական մտահոգությունը դիվանագիտական հարաբերությունների բացակայությունն է: «Մենք չենք ուղևորվում այնտեղ, որտեղ չունենք հյուպատոսական պաշտպանություն: Դա անվտանգ չէ». սա է այն ընդհանուր դիրքորոշումը, որը թույլ չի տալիս թուրք գործարարներին ավելի պրոակտիվ կերպով համագործակցելու հայաստանյան գործընկերների հետ: Հայաստանյան գործարար կազմակերպությունները և անձնական կապերը կարող են նպաստել Թուրքիայից դեպի Հայաստան ներդրումների հոսքին: Սակայն դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում ներդրումները չեն կարող պաշտպանվել երկկողմ ներդրումային համաձայնագրերի կնքմամբ: Դրանք պաշտպանված են միայն համապատասխան ՀՀ օրենքներով, ինչն անբավարար է համարվում:

Ընդհանուր առմամբ, համագործակցությունից ակնկալվող տնտեսական օգուտները կարող են լինել զգալի և բազմակողմանի: Կամ, այլ կերպ ասած, սահմանի փակ մնալը հանգեցնում է տնտեսական կորուստների: Այսպիսով, թեև Թուրքիայի և Հայաստանի գործարար համայնքները կատարել են առաջին քայլերը այդ ներուժը բացահայտելու և նոր կամուրջներ կառուցելու ուղղությամբ, այնուամենայնիվ, նրանք կարող են միայն ուղեկցող դեր կատարել երկու երկրների միջև հարաբերությունների բարելավման գործում:

Եզրակացություն

Սույն զեկույցը հիմնված է այն համոզմունքի վրա, որ Հայաստանի և Թուրքիայի, ինչպես նաև այդ երկրների հասարակությունների միջև երկխոսության գործընթացը պետք է հիմնվի երկարաժամկետ հեռանկարի վրա: Երկխոսությունը կարող է նշանակալի ներդրում ունենալ քաղաքական հարաբերություններում, սակայն առավել խոստումնալից է դրա գոյությունը չափազանց շատ չպայմանավորել քաղաքական զարգացումներով: Երկխոսությունը, հարաբերությունների կարգավորումը և հաշտեցումը երկարաժամկետ ազդեցություն կունենան հասարակությունների վրա և ժամանակի ընթացքում կփոխեն քաղաքական նախընտրությունները՝ հիմքեր ստեղծելով ավելի շատ փոխշահավետ արդյունքների հասնելու համար: Երկխոսության գործընթացների մասնակիցները, ինչպես նաև երկխոսության առաջընթացի համար նյութական ռեսուրսներ տրամադրող գործակալություններն ու կազմակերպությունները բավականաչափ համբերություն պետք է դրսևորեն, որպեսզի կարողանան տեսնել այդ գործընթացների դրական արդյունքը, թեև այն ամենևին էլ երաշխավորված չէ:

Երկխոսության ընթացիկ վիճակը հասկանալու համար թերևս նպատակահարմար է այն իբրև երեք փուլերից բաղկացած գործընթացի մաս դիտարկելը: Այսպես, գործընթացի առաջին փուլը պետք է զարգանար Արձանագրությունների ստորագրման քաղաքական ազդեցությամբ: Երկխոսության կողմնակիցները՝ ոգևորված նաև քաղաքական նախաձեռնությամբ, սկսեցին ավելի համակարգված կերպով երկխոսության գործընկերներ փնտրել, սահմանի մյուս կողմում կապեր հաստատեցին, անհրաժեշտ ռեսուրսներ գործի դրեցին և անդրսահմանային խնդիրների վերաբերյալ հանրության իրազեկման նախնական գործընթաց իրականացրեցին: Այդ առաջին փուլն արդեն ավարտվել է:

Այժմ երկրորդ փուլը պետք է ավելի ճշգրտորեն գնահատի երկխոսության աճող ներուժը՝ հիմնականում հետևելով սույն զեկույցում ներկայացված առաջարկություններին և հստակեցնելով երկխոսության խորացման և ընդլայնման հնարավորությունները: Իմաստ ունի նաև քննարկումներ սկսել երկխոսության երրորդ փուլի՝ «թոփչքի գազաթնակետի» մասին՝ ներառելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են երկխոսության երկարաժամկետ զարգացումը, կայունությունը և շրջանակները, ինչպես նաև այն երկարաժամկետ քաղաքական արձագանքը, որը երկխոսությունը կգտնի Հայաստանի և Թուրքիայի քաղաքական և սոցիալական փոխհարաբերություններում: Ըստ ամենայնի, ներկայումս թուրք-հայկական երկխոսությունը գտնվում է սկզբնական փուլի ավարտական շրջանում:

Ելնելով զեկույցի եզրակացություններից՝ ստորև ներկայացվում են այն հիմնական ուղերձները, որոնք կարող են նպաստել երկխոսության զարգացմանը.

- 1) Ճանաչել Թուրքիայի և Հայաստանի աշխարհաքաղաքական անհամամասնությունները և մշակել գործիքներ, որոնք հնարավոր կդարձնեն երկխոսությունն այդ անհամամասնությունների շրջանակից դուրս,
- 2) Ձևավորել վստահություն և փոխըմբռնում երկխոսության գործընկերոջ նկատմամբ: Թեև պատմական իրադարձությունները ծանր բեռ են թողնում Հայաստանի և Թուրքիայի հասարակությունների միջև հարաբերությունների վրա, դրանք կարող են ելակետ դառնալ շփումների համար,
- 3) Խորացնել և ընդլայնել երկխոսությունը: Սկսել դուրս գալ Ստամբուլի և Երևանի շրջանակներից և մշակել ընդլայնման ռազմավարություններ՝ մասնավորապես երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին ներգրավելու նպատակով,
- 4) Ճանաչել Թուրքիայի ու Հայաստանի հասարակությունների բազմաշերտությունը և ներքաղաքական հակասությունները և կիրառել դրանք ոչ թե մարտավարական օգուտներ ստանալու, այլ երկխոսության գործընկերոջ առավել տարբերակված ընկալումը ձևավորելու համար:
- 5) Գիտակցել փակ սահմանների հետևանքով կորցրած տնտեսական հնարավորությունների զինը և հնարավորության դեպքում ստեղծել գործարար կապեր համայնքների միջև:
- 6) Կարևորել թուրք-հայկական հարաբերությունների տարածաշրջանային հարթությունը և երկխոսություն սկսել տարածաշրջանային հնարավոր զարգացումների շուրջ՝ քաղաքականության փոխշահավետ տարբերակներ բացահայտելու նպատակով: